ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ,
КУЛЬТУРЫ И СПОРТА
ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE
AND SPORT
DEPUTY MINISTER

0010, Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: +374 10 59 96 00, Ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43,
0010, Ереван, В. Саргсян 3, Дом правительства 2, 0010, V. Sargsyan 3, Government House 2, Yerevan, secretariat@escs.am, www.escs.am

N02/22/7551-2026

mediaforedu.am կայքի խմբագիր
ԱՆՈՒՇ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ
Էլ.փոստ՝ mediaforeducation.ngo@gmail.com

Ի պատասխան Ձեր՝ 05.03.2026թ. ԿԳՄՍ նախարարությանն ուղղված հարցման

Հարգելի՛ Անուշ Մարտիրոսյան,

1. ՀՀ հանրակրթական դպրոցների 9-րդ դասարաններում ինտեգրված էսսեն որպես քննական բաղադրիչ ներդրվել է Հանրակրթության պետական չափորոշչի շրջանակում՝ համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի: Ծրագիրը նախապես շուրջ 2 տարի փորձարկվել է ՀՀ Տավուշի մարզի դպրոցներում, որից հետո տեղայնացվել է նաև ՀՀ հանրակրթական բոլոր դպրոցներում՝ փուլային եղանակով: Ինտեգրված էսսեն նախատեսվում է որպես գնահատման գործիք, որը հնարավորություն է տալիս ստուգելու սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, տարբեր առարկայական ոլորտների գիտելիքների համադրության և գրավոր արտահայտման կարողությունները՝

համահունչ ՀՊՉ-ով սահմանված վերջնարդյունքներին: Հետևաբար, ինտեգրված էսսեի ներդրումը պայմանավորված է կրթական բովանդակության և գնահատման համակարգի բարելավման քաղաքականությամբ և չի իրականացվում որևէ արտաքին դրամաշնորհային ծրագրի կամ միջազգային պարտավորության շրջանակներում:

2. 9-րդ դասարանում պատմություն և գրականություն առարկաներից ինտեգրված էսսեի ձևաչափի ներդրման գործընթացում իրականացվել են մի շարք փորձնական և մեթոդական աշխատանքներ, որոնք հնարավորություն են տվել գնահատելու ինչպես սովորողների, այնպես էլ ուսուցիչների պատրաստվածության մակարդակը: Մասնավորապես, ՀՊՉ-ի շրջանակում ինտեգրված էսսեի ձևաչափը փորձարկվել է Տավուշի մարզում՝ որպես պիլոտային ծրագիր: Այդ շրջանակում 9-րդ դասարանի սովորողները պատմություն և գրականություն առարկաներից քննություն են հանձնել միասնական էսսեի ձևաչափով,իսկ գործընթացի արդյունքները դիտարկվել և վերլուծվել են հետագա քայլերը որոշելու նպատակով:

Միաժամանակ, ուսուցիչների պատրաստվածության ապահովման նպատակով կազմակերպվել են թեմատիկ վերապատրաստումներ,մշակվել են մեթոդական նյութեր և ուղեցույցներ, ինչպես նաև կազմակերպվել են փորձնական քննություններ և դրանց արդյունքների քննարկումներ՝ ուսուցիչների մասնագիտական կարողությունների

զարգացման և գործընթացի արդյունավետ կազմակերպման նպատակով: Փորձնական գործընթացների և հավաքագրված տվյալների հիման վրա իրականացվում է արդյունքների վերլուծություն, որը հաշվի է առնվում ինտեգրված էսսեի ձևաչափի հետագա կատարելագործման և հնարավոր լայնածավալ ներդրման ընթացքում:

2025 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին հանրապետության պատմության և գրականության բոլոր ուսուցիչների հետ իրականացվել են հեռավար վերապատրաստումներ, իսկ հունվարի 16-ից մինչև փետրվարի 25-ը Երևանի բոլոր վարչական շրջանների ուսուցիչների հետ՝ գործնական սեմինարներ (որի ընթացքում ուսուցիչները գրում են ինտեգրված էսսե, ստուգում են սովորողների գրավոր աշխատանքները և գնահատում՝ պատկերացնելով նաև գնահատման գործընթացը), որից հետո դպրոցները տեղերում կազմակերպում են փորձնական քննություններ և արդյունքները ուղարկում են ԿԶՆԱԿ: Մարտի կեսերից նույն գործընթացը կիրականացվի մարզերում: Ուսուցիչների պատրաստվածության ցուցանիշ են գործնական սեմինարի ընթացքում նրանց աշխատանքները և ստուգած գրավորները, որոնք վերլուծվում են բոլորի ներկայությամբ և ուսուցիչները ստանում են իրենց հուզող բոլոր հարցերի պատասխանները: Բոլոր դպրոցներից տվյալները ստանալուց հետո կիրականացվի արդյունքների վերլուծություն:

Ուսուցիչները պարբերաբար կապի մեջ են ԿԶՆԱԿ-ի հետ, ստանում են գործնական աջակցություն,ուսուցիչներնուղարկում են իրենց աշակերտների գրած էսսեները,

նրանց հետ կազմակերպվում են քննարկումներ, տրվում են ուղղորդումներ: Գործընթացն ակտիվ ընթացքի մեջ է:

Восстановимая подпись

X

ԱՐԱՔՍԻԱ ՍՎԱՋՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Подписано: SVAJYAN ARAKSIA 6304780168 **ԱՐԱՔՍԻԱ ՍՎԱՋՅԱՆ**

Կատ.՝ Հանրակրթ.և արտադպրոց.կրթ.քաղաքակ.մշակման և վերլուծ.բաժնի գլխավոր մասնագետ՝ Ալինա Հակոբյան, հեռ.՝ 010599699 (519),
Տեղեկատվության բաժնի գլխավոր մասնագետ՝ Լալա Բաղոյան, հեռ.՝ 010599699 (612):